

ՀԱՅ ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ:

(Տեսութիւն հայ սովորութեան իրաւունքից)

Անցեալ դարում տակաւին հայ իրականութեան մէջ, մանաւանդ գիւղերում և յետ ընկած գաւառական քաղաքներում գոյութիւն ունէր և ծաղկում էր ընտանեկան համայնքը, այսինքն նահապետական գերդաստանը, որ բաղկացած էր լինում առնուազն 30—40 հոգուց և շատ անգամ հասնում էր նոյն իսկ 60—70 և աւելի թուով շնչերի: Այդ տեսակ ընտանեկան համայնքները, պարփակելով մի յարկի տակ արեւնակից մօտիկ ազգականներին՝ եղբայրներին, որդիներին իրենց կանանցով, զաւակներով ու թոռներով, կազմում էին մի բնորոշ ու հետաքրքիր սոցիալական երևոյթ, ներկայացնում էին հետազօտութեան մի լուրջ օբյեկտ, որը տարաբաղդաբար շատ նուազ ուշադրութեան էր առնուած հայ կուլտուրական պատմութեան ուսումնասիրողների կողմից:

Հայ նահապետական գերդաստանը իր ուրոյն իրաւական—տնտեսական կազմով, իր հասարակական—անհատական աշխարհայեացքներով մի հիմնարկութիւն (ինստիտուտ) է, որը իրենով բնորոշում է մարդկային կուլտուրական զարգացման մի յատուկ շրջանը, այսպէս անուանած նահապետական, հայրիւսանական: Դա մի հիմնարկութիւն է, որը իր մէջ ամբարած ունի դարեւոր էվօլյուցիոնի ուղիով անցած հանրակեցական կեանքի երևոյթները, որոնց վերլուծմամբ և որոնց օգնութեամբ միայն հնարաւոր է պարզաբանել մարդկային ու հասարակական փոխադարձ յարաբերութիւնների զարգացումը ամենահին ժամանակներից սկսած մինչև մեր օրերը, սկսած մի մօմենտից, որի աղօտ լոյսերը կորչում են ալեւոր հնութեան մէջ, սուղում, անհետանում են անմերձեանալի խող խա-

ւարի ալիքներում: Ընտանեկան համայնքի ուսումնասիրութիւնը միայն հնար կըտայ որոշ չափով լոյս սփռելու այն յարաբերութիւնների վրայ, որոնք այդ հասարակական շրջանում գոյութիւն ունէին այր և կնոջ, ծնողների ու զաւակների միջև. նա միայն մեզ կարող է պարզել անշարժ ու շարժական սեփականութեան նախնական բնաւորութիւնը և վերջապէս նրա մէջ միայն կարող ենք գտնել նախնական իրաւաբանական բոլոր երևոյթների, իրաւական հիմնարկութիւնների գոյացման ու ծաղկման բացատրութիւնները:

Նահապետական գերդաստանի բնորոշ գիծը — հայրիւխանութիւնն է, պատրիարխատը, այսինքն գերդաստանի գլուխ է կանգնած նահապետը, հայրը իր բացարձակ իշխանութեամբ: Հայրիշխանական ընտանիքը ներկայացնում է ընդհանրապէս գերդաստանի, ընտանեկան համայնքի, ամուսնական խմբակցութեան էվոլիւցիոնի այն շրջանը, որ յաջորդել է մայրիւխանութեանը, մատրիարխատին, մի շրջան, որը ընտանիքի էվոլիւցիոնի մէջ համեմատական իրաւագիտութեան կողմից ամենահինն է ճանաչուում. մի շրջան, ուր ընտանեկան համայնքի զարմը գնում էր մայրական գծով և պահպանուում էր մայրական իրաւունքների գերիշխանութեամբ:

Ներկայ հետազոտութեամբ մենք փորձելու ենք վերլուծել հայ նահապետական գերդաստանի բնոյթը, իբրև մի հիմնարկութեան, որ անցնելով որոշ պատմական ուղիով կենդանի պատկերացնում է հայ կուլտուրական պատմութեան էջերից մէկը՝ հայ հասարակական — իրաւաբանական յարաբերութիւնների ամբողջ ընթացքը նահապետական — տանուտիրական շրջանում: Սա մի շրջան է, որ փոխանցական աստիճան է ներկայացնում մայրիշխանական, կամ աւելի ճիշտն ասած մայրական իրաւունքի, ընտանիքի և արդի անհատական ընտանիքի միջև. հայրիշխանական ընտանիքի այդ պատմական նշանակութիւնը արդէն ապացուցուած պէտք է համարել մանաւանդ հին աշխարհի արիացիների ու սեմիտների վերաբերմամբ:

Ինչ վերաբերում է մայրիշխանութեան, ներկայ մեր հետազոտութեան շրջանակները թոյլ չեն տալիս այստեղ կանգ առնելու ընտանիքի զարգացման մեզ յայտնի ամենահին աստիճաններից մէկի՝ մայրական իրաւունքի վրա, որի հետքերը գտնում ենք նաեւ հայ սովորութեական իրաւունքի մնացորդ բեկորների մէջ։ Այդ մայրական իրաւունքի վերլուծումն մենք առիթ կունենանք կատարելու մի այլ անդամ։

II

Հայրիշխանական գերդաստանը ունիվերսալ, ընդհանրական երեւոյթ է բոլոր ժողովրդների հասարակական սոցիալական զարգացման պատմութեան մէջ։ Սկսած ամենահին պատմական ժամանակներից մինչև ներկայ օրերը դա գոյութիւն է ունեցել կամ տակաւին գոյութիւն ունի զանազան ժողովրդների մէջ։ Գերմանացի գիտնականներ՝ Իերինգի և Մոմզէնի ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ հին Հռովմում թագաւորների ժամանակները և հանրապետութեան առաջին շրջաններում հռովմէական բարքերի մէջ պահպանւում էին ընտանեկան համայնքի հետքեր։ Համայնքի, որի անդամները ապրում էին միևնոյն յարկի տակ։ Այդ հայրիշխանութեան գաղափարը նոյն իսկ իրաւաբանական սանկցիա ստացաւ և մտաւ հռովմէական օրէնքների մէջ patria potestas-ի յայտնի հիմնարկութեամբ։ Patria potestas—հայրական այդ իշխանութիւնը պատկանում էր նոյնպէս հռովմէական օրէնքներով ճանաչուած pater familias-ին, գերդաստանի հօրը, որի այդ իրաւունքը նշանաւոր հռովմէական հին օրէնագէտ Ուլպիանն այսպէս է բնորոշում. pater familias appellatur, qui in domo dominium habet *)։

Տակիտոսի և Յուլիոս Կեսարի վկայութիւնների հիման վրայ հաստատւում է, որ հին գերմանացիները ապ-

*) Գերդաստանի հայր է կոչւում նա, ով իր տանը իշխանութիւն ունի։

րում էին ընտանեկան համայնքներով հայրիշխանութեան ներքոյ։ Այդ համայնքները շարունակում են իրենց գոյութիւնը պահպանել միջին դարերի ամբողջ ընթացքում, թէ Դիտմարչէնի հանրապետութեան մէջ, թէ հարաւային Գերմանիայում և թէ Զուիցերիայում, ուր այդ համայնքները տեղական լեզւով կոչւում էին Pfrund։ Այս հանգամանքը առատ նիւթ տուեց համեմատական իրաւաբանութեամբ զբաղւողներին, որոնք արիական ժողովրդների հին ընտանեկան իրաւունքը հետազօտելու նպատակով մանրակրկիտ ուսումնասիրութեան ենթարկեցին հին գերմանական ժողովրդների իրաւունքները։ Այդ հետազօտողներից մէկը՝ Զուիցերիացի գիտնական Հոյսլէրը, այսպէս է ընտրուում այն եզրակացութիւնները, որոնք հետեւում են այդ մասնագիտական ուսումնասիրութիւններից. «Հին գերմանացիների ընտանիքը չի ներկայացնում միմիայն այնպիսի անձերի միութիւն, որոնք կապուած են իրար հետ ամուսնութիւնով կամ արենակցական ազգակցութեամբ. դա մի համայնք է, որի անդամները ապրում են միեւնոյն յարկի տակ (Hausgenossenschaft)։ Այդ համայնքի մէջ մըտնում են ոչ միայն ազատները, այլ և բոլորը, որոնք որեւէ կերպով կախումն ունեն համայնքի գլխապետից, այն է ստրուկները և ստրկութիւնից ազատուածները։ Այդ ընտանիքը կարելի է ուրեմն որոշել իբրեւ այնպիսի անձերի միութիւն, խմբակցութիւն, որոնք միասին են ապրում և ճանաչում են միեւնոյն տանուտէրի իշխանութիւնը (sa'munt)»։

Ջէնդ.— Ավետան ու Րիդ — Վէդան էլ, արիական գրականութեան այդ առաջին յիշատակարանները գալիս են պարզելու, որ հին պարսիկների ու հին հնդուսների մէջ ծաղկում էին հայրիշխանական ընտանիքները։

Նմանապէս պատմական և ժամանակակից տեղեկութիւնների հետազօտութեան հիման վրայ գտնում ենք հայրիշխանութեան գոյութիւնը հին և նոր սլաւ բոլոր ժողովրդների մէջ. ինչպէս բուլղարների և սերբերի մէջ задруга-ն նոյն իսկ մեր օրերում։ Մեմիտական ժողովրդներից

բաւական է միայն յիշել հին իտրայեւացիներին, որոնք, ինչպէս իւրաքանչիւրիս էլ յայտնի է Աստուածաշնչից, ապրում էին հայրիշխանական ընտանիքներով, որոնց նահապետների անուններից մի քանիսները նաև յիշատակւում են:

Այս տեսակ փաստերի վրայ երկար կանգ չենք առնում, որովհետև նրանք չափազանց բազմաթիւ են ու ակնյայտնի, այլ դառնանք մեր ընտրած նիւթին և տեսնենք, թէ ինչ ձևերով և ինչ իրաւաբանական—տնտեսական սկզբունքներով է ներկայանում հայերի մէջ հայրիշխանութիւնը, այդ իրաւական—հասարական հիմնարկութիւնը, որի կօնկրէտ արտայայտումն դարերով ապրել է նահապետական գերդաստանի սահմաններում:

Որպէս յայտնի է արդէն, հայ նահապետական գերդաստանի բեկորները գոյութիւն ունէին տակաւին անցեալ դարու վերջերը: Այդ ընտանեկան համայնքը իր ուրոյն և առանձնայատուկ հասարակական բնոյթով նոյն իսկ տեղ էր գտել հայ վիպագրութեան ու բանաստեղծութեան մէջ, որի մի քանի ներկայացուցիչները, ինչպէս Բաբելին («Խէնթ») և Պօռչեանը («Կռուածաղիկ») և «Սօս և Վարդիթ» իրենց գեղարուեստական գրչով անմահացրին հայ նահապետական գերդաստանը, իդէալացրին իրենց մանրբուրժուազիական աշխարհայեացքներում: Էլ չենք ասում ազգագրական ու տնտեսական բանահաւաքումն, ճանապարհորդական նկարագրութիւնները, որոնք ներկայումս մի ահագին պաշար են կուտակել հայ նահապետական գերդաստանի ներքին ու արտաքին կեանքի, հասարակական կազմի մասին: Այդ ամբողջ գրականութեան հիման վրայ հայ նահապետական գերդաստանը իր հայրիշխանական սկզբունքով արտաքուստ այսպէս է մեղ ներկայանում:

Գերդաստանի մեծը, գլուխը համարւում է սովորաբար հայրը, որ կոչւում է պապ, նահապետ, տատիկ, տատ մեծ (Ջաւախքում), սպիտակ մօրու կամ ջօջաուր (Բուլանըխում): Նահապետի իշխանութիւնը գրեթէ ծայրահեղ է և տարածւում է եղբայրների, որդիների, թոռ-

ների, սրանց կանանց և այն բոլոր նոյն իսկ ոչ արևելա-
կից (տանփետան, ծառան-անոքար) անձերի վրայ, որոնք
ապրում են նրա գերդաստանական յարկի տակ, Այդ իշ-
խանութիւնը տարածւում է ոչ միայն անձի, այլև ստա-
ցուածքի վրայ։ Նա է որոշում իւրաքանչիւրի աշխատանքը,
տնօրինում բազդն ու կեանքը, ամուսնացնում որդիներին
ու թոռներին, պատժում և նոյն իսկ հեռացնում տանից
այն անդամին, որը համարձակւում է ընդէմ գնալ իր
իշխանութեանը։ Որդիներն ու թոռները չեն համարձակ-
ւում նրա ներկայութեամբ ոչ միայն խօսել և իրենց կար-
ծիքները յայտնել, այլ և նստել, մինչև որ նա չհրամայէ։
Նահապետը պատասխանատու է գերդաստանի ամեն մի
անդամի արարքների համար, նա պարտաւոր է իր միջոցնե-
րի համեմատ հոգալ իւրաքանչիւր անդամի կարիքները,
հետեւել նրա վարք ու բարքին։ Նա միայն, իբրև գերդաս-
տանի ճանաչուած ներկայացուցիչ, իրաւունք ունի մասնակ-
ցելու գիւղական և հասարակական բոլոր գործերում իր
գերդաստանի կողմից, նմանապէս հարսանիքներում, թա-
ղումներում և այլ ընտանեկան հանդէսներում ու աօնա-
խմբութիւններում նա հանդէս է գալիս իր գերդաստանի
իբրև միակ ներկայացուցիչը։ Գերդաստանի ներքին տնա-
յին կառավարութիւնը գտնւում է նահապետի կնոջ՝ sui-
ssi, մօր ձեռքում։ Նա է հսկում հարսների ու աղջիկների
վրայ, առանց որի թոյլատուութեան վերջինները ոչինչ ի-
րաւունք չունեն անելու, մի բան վերցնելու, գործ կատա-
րելու, մանաւանդ որ տան բոլոր բանալիները նրա մօտ
են պահւում։ Տատը շատ անգամ միջնորդ է հանդիսա-
նում հարսների և սրանց ամուսինների, որդիների և
սրանց հայրերի կամ նահապետի միջև։

Ուրուագծելով նահապետական գերդաստանի ընդհա-
նուր պատկերը, դառնանք նրա էական տարրերին, հիմ-
նական մասնիկներին, որոնք բնորոշում են հայրիշխանու-
թեան իրաւական-հասարակական բնոյթը, վերլուծենք ու
քննենք այդ հիմնարկութեան բաղկացուցիչ մասերը, վեր-
ստեղծենք մեր աչքերի առաջ նրա զարգացման յաջոր-

դող մոմենտները, Հայրիշխանութիւնը իր իրաւական նշանակութեամբ պարփակում է ընտանեկան համայնքի անդամների փոխադարձ յարաբերութիւնների նկատմամբ երեք էական սկզբունքներ, երեք բնորոշ իրաւաբանական հայեացքներ. patria potestas—հայրական իշխանութիւն իր իսկական նեղ ըմբռնումով, յայնուհետև manus—մարդու իշխանութիւնը իր կնոջ վրայ և վերջապէս agnatio—ազգակցութեան ազնատական կարգը, հօրական զարմը։ Այս վերոյիշեալ իրաւաբանական երևոյթները բղխում են բնականօրէն հայրիշխանական ընտանիքի ամբողջ էութիւնից, նրա սոցիալ—տնտեսական բովանդակ կազմից։ Այդ իրաւաբանական երևոյթների ծագման ազդակները թագնուած են ընտանեկան համայնքի խորքերում. համայնքի, որը, ներկայանալով աւելի հին գերդաստանական կազմի զարգացման մի հետեւանք, լինելով հասարակական էվոլյուցիոնի որոշ ֆազերից մէկը, բաղկացած է գլխաւորապէս արիւնակից ազգականների խմբակցութիւնից, որոնք ապրում են մի յարկի տակ և միաբան ուժերով, միացած հոգսերով առաջ են մղում իրենց տնտեսութիւնը, ի մի կենդրոնացնում իրենց կենսական նպատակները, բարոյական ձգտումները։

Նահապետական գերդաստանը, լինելով հասարակական բաղկացուցիչ մասերից մէկը և կենդրոնացնելով իր մէջ հասարակութեան մտաւոր-բարոյական աշխարհայեացքի ձևերը, սոցիալ—տնտեսական գոյութեան կերպերը, բնականօրէն աչքի է ընկնում իւրաքանչիւր հետազօտողին իր երկու բնորոշ, առանձնաշատուկ կողմերով։ Հայ նահապետական գերդաստանը մեր առաջն է հանդիսանում նախ՝ իբրև մի կրօնական համայնք, մի հասարակութիւն, որ հիմնուած է իր նախնիքների կուլտի, պաշտամունքի վրայ, երկրորդ՝ իբրև տնտեսական միութիւն, աշխատակցական ու ստացուածքային մի հանրակեցական համայնք։

III

Շատ տարօրինակ կըթուայ առաջի հայեացքից այն կարծիքը, թէ նահապետական իւրաքանչիւր գերդաստանը ներկայացնում է որոշ կրօնական միութիւն իր յատուկ աստուածներով, սրբերով և իր առանձնայատուկ պաշտամունքով։ Սակայն բոլոր ժողովրդների հայրիշխանական ընտանիքների կազմերի ուսումնասիրութիւնը և սրանց համեմատական վերլուծումը ապացուցանում է հայրիշխանական ընտանիքի գոյութիւնը ամենուրեք իբրև նաև կրօնական մի հիմնարկութեան։ Թէ պատմական փաստերը և թէ ժամանակակից ռամիկ ժողովրդական կեանքի առօրեայ դժերը մեզ պարզ են կացուցանում այն միամիտ հաւատալիքները մեռած նախնիքների հոգիների ու սրանց կենդանի մնացած ընտանիքների միջև եղած փոխադարձ յարաբերութիւնների մասին, որոնք ստեղծում են մի կրօնական մթնոլորտ, ուր տիրապետում է նախնիքների կուլտը, օջախի պաշտամունքը, տնային ոգիների՝ բարի և չար ուժերի գոյութիւնը, հոգիների կերպարանափոխումները ընտանեկան յատուկ սրբերի, աստուածների և հովանաւորողների անհրաժեշտութիւնը։ Բաւական է միայն նկատի առնել բոլոր հարսանեկան ծէսերը, ծննդեան, մկրտութեան և թաղման վերաբերեալ սովորութիւններն ու սնապաշտութիւնները և վերջապէս այն բոլոր ծիսակատարութիւններն ու հաւատալիքները, որոնցով անպայման ուղեկցւում են ընտանեկան կեանքում կատարուող բոլոր նշանաւոր տօներն ու արտասովոր հանդէսներն ու դէպքերը, որպէսզի տեսնենք, որ այդ բոլորը տողորուած են գերդաստանական կրօնի հայեացքներով, հիմնուած են միմիայն ընտանեկան պաշտամունքի սկզբունքների վրայ։ Այդ ընտանեկան կրօնական աշխարհայեացքի ելակէտը կազմում է այն, որ ապագայ՝ միւս աշխարհի կեանքը միանգամայն նման է այս իրական աշխարհի կեանքին։ Դա մի կրօնական հայեացք է, որը սերտ կապերով է կցորդուած հոգեպաշտութեան՝ անիմիզմի՝ այդ նախնա-

կան կրօնական հաւատի հետ:

Հոգեպաշտութիւնը, որ ներկայանում է այստեղ իբրեւ բնական ֆէտիշիզմ, միանգամայն բացատրելի է մեզ, որպէս մի կրօնական հայեացք, որ ծագել է նախնական կուլտուրայի որոշ աստիճաններում և ապա ծաղկելով, շարունակել է իր բեկորները յետագայում պահպանել ռամական աշխահայեացքներում: Նախնական մարդու կրօնական հատկացողութեան հիմքը կազմում է շրջապատող բնութիւնը, որը նրան տալիս է կեանքի՝ այդ աներևոյթ և անհասկանալի սկզբունքի մտապատկերը: Մարդում էջ համոզմունք է կազմւում, թէ առարկանները, օրգանիզմը, որոնք ոչնչանում, քայքայւում են, այնուամենայնիւ մի որոշ ժամանակ շարունակւում են գոյութիւն ունենալ, թէ նրանցից ինչ ո՞ր բան մնում է, որ յետոյ տպաւորւում է մարդկանց յիշողութեան, երեակայութեան մէջ իբրեւ պատկերներ այդ առարկաների: Նախնի մարդը, տեսնելով մահուան դէպքը, երբ օրգանիզմը մի րոպէ առաջ կեանք էր ներկայացնում, իսկ այժմ թէև մնացել է անփոփոխ, բայց և ինչ որ մի բան այդ մարմնից բաժանւել է, իր հասկացողութեան մէջ դադարւար է ստեղծում, որ կեանքը մի ինչ որ առանձին, ինքնուրոյն բան է, որովհետեւ մարմինը մերթ կարող է օժտուած լինել այդ կեանքով, մերթ զրկւում է նրանցից: Եւ այդ խորհրդաւոր, անտեսանելի բանը, որը մի քանի դէպքում մնում է, իսկ մի քանի դէպքումն էլ ընդ միշտ անյայտանում, նախնի մարդը պատկերացնում է իբրեւ մի հոգի: Այդ հոգին, բաժանուելով իսպառ մարմնից, կենդանի է մնում, որովհետեւ, թողնելով սառած, անշնչացած մարմինը, նա դրանով ցոյց է տալիս իր կենսունակութիւնը, շարժողութիւնը: Քանի որ մարմինը կենդանի է, այսինքն հոգին նրա մէջն է, ակնհայտ է, որ այդ մարմինը իր գոյութիւնը պահպանում է նիւթական սնունդով, հետևապէս և հոգին էլ ապրում էր այդ սնունդով: Այսպիսի հայեացքների ներքոյ նախնական մարդը անհրաժեշտ է գտնում, որ մարմնից անջատուած հոգին, շարունակելով իր գոյու-

Թիւնը, պահանջի իր նախկին ստացած անունդը: Ահա այստեղից այն պարտականութիւնների ծագումը, որոնք իրենց վրայ էին վերցնում կենդանի մնացածները ազգական մեռեալների, բաժանուած հոգիների վերաբերմամբ, քանի որ ըստ ֆէտիշիստական ըմբռնման մարդիկ գիտակցում էին, որ բնութիւնը, հոգիների ու ոգիների այդ աշխարհը, մարդուս վրայ տիրապետող մի իշխանութիւն, մի ոյժ էր: Հոգիների այս տեսակ պաշտամունքից էլ առաջ է եկել նախնիքների ու օջախի կուլտը, որը իւրաքանչիւր նահապետական գերդաստանի հիմնաքարն է. մի պաշտամունք, որ նախնի հասարակական կրօնների աղբիւրն է դառնում, որովհետեւ ոգիները և նախնիքների հոգիները ժամանակների ընթացքում մարդկային մտապատկերների մէջ աստուածացւում էին:

Ուրեմն հասկանալի է, որ արդէ նահապետական գերդաստանը, ներկայանալով նաև որպէս կրօնական մի համայնք, տողորուած է միանգամայն մատերիալիստական աշխարհայեացքով դէպի հանդերձեալ կեանքը, դէպի իր պաշտամունքի օբյեկտները: Այդ ընտանեկան կրօնական համայնքի գլխաւոր հոգեւոր ներկայացուցիչը համարւում է նահապետը, տանուտէրը, նա մի տեսակ կրօնական ծիսակատար է, օջախի և գերդաստանի նախնիքների հոգիների պաշտամունքի գլխաւոր արարողը, պատասխանատուն, որով ապահովուած է ընտանիքի յարատեւ գոյութիւնը: Այդ կուլտը անցնում է նահապետից նահապետ առնական հօրական գծով, իբրև ազնատական սկզբունքի գրաւականներից մէկը: Որպէս զի քիչ թէ շատ ընդարձակօրէն ծանօթանայինք հայ ընտանեկան կուլտի ամբողջ պատմութեան ու զարգացման հետ, անհրաժեշտ էր այստեղ առաջ բերել ահագին քանակի այն փաստերը, որոնք ներկայումս հաւաքուած կան հայ բանասէրների ձեռքով հայ ժողովրդական կեանքից: Սակայն մենք այդ փաստերն ու տեղեկութիւնները այստեղ առաջ չենք բերում, որովհետեւ արդէն առիթ ենք ունեցել մի անգամ «Հայ ընտանեկան պաշտամունքը» խորագրով մեր ընդարձակ աշխա-

տութեան մէջ^{*)} մանրամասնօրէն վերլուծելու հայ նահապետական գերդաստանի այն բոլոր տարրերը, առանձնապատուկ գծերը, որոնք բնորոշում են նրա կրօնական համայնքի նշանակութիւնն ու գոյութիւնն ունենալը:

Պարզաբանելով վերոյիշեալի հիման վրայ ընտանեկան համայնքի կրօնական հաւատալիքների գոյացման պատճառները և ծանօթանալով բոլոր հաւաքուած փաստերի հետ, մենք անշուշտ հնարաւորութիւն ենք ստանում ըմբռնելու ներկայումս գոյութիւնն ունեցող բոլոր ժողովրդական մոտփապաշտական ծէսերի, սովորութիւնների և հաւատալիքների սրբազան նշանակութիւնը, որ այնպէս ակնածութեամբ ու պահպանողութեամբ կատարւում է մեր իրականութեան մէջ, երբ չնայած նոյն իսկ քրիստոնէութեան միահեծան ազդեցութեանը այդ հաւատալիքներն ու պաշտամունքները, եթէ ոչ բոլորովին, գոնէ իր բեկորներով, շարունակւում են պահպանուել նաև քրիստոնեայ ընտանիքների հայեացքներում: Զարմանալի չէ, որ արդի քրիստոնէական հայեացքների մէջ ընտանեկան պաշտամունքի վերաբերմամբ գտնում ենք նոյն գծերն, նոյն բնորոշ տեսակէտները, որոնք պարփակուած են այնպիսի հնադարեան կրօնական հիմքերի և ժողովածուների մէջ, ինչպիսին է հնդկական Բիգ վեդան. գտնում ենք նմանապէս անտիկ աշխարհի բանաստեղծների և պոզայիկների երկերում. նշմարում ենք հէլլենների ժողովրդական վիպասանութիւններում: Այդ գերդաստանական պաշտամունքի մթնոլորտում, այդ ընտանեկան կրօնական համայնքում էր ամրանում, կոփւում ժողովրդի իրաւագիտակցութիւնը, գոյանում հասարակական փոխադարձ յարաբերութիւնների կարգաւորիչ իրաւաբանական նորմերը: Ահա թէ ինչու իրաւունքը իր զարգացման առաջի քայլերում միշտ տողորուած է եղել կրօնական սկզբունքներով, աստուածային կամքի գաղափարներով:

Խ. Սամուէլեան.

(Շարունակելի).

^{*)} «Ազգագրական հանդէս» տես. հատորներ XII, XIII, և XIV.